

Մայրերու Օրուան նուիրուած տօնակատարութիւն ՀԲԸՄ Ոսկեայ Տարիքի յանձնախումբին կողմէ

Ոսկեայ Տարիքի անդամուհիները Մայրերու Օրուան յաջորդող Չորեքշաբթի կեսօրուան ճաշի հաւաքման օրը՝ 16 Մայիս 2007ին, մեծ ուրախութիւնով տօնեցին Մայրերու Օրը: Պատուոյ նախագահուիին էր բոլորին սիրելի տիկին Էլտա Արքիպրիթեան, որուն կընկերանար իր դուստրը՝ Հերա Մուրատեան:

Ո.Տ.Յ. ատենապետ՝ Յակոբ Մելքոնեան կոկիկ յայտագիր մը պատրաստած էր: Իբր հանդիսավար ան հրաւիրեց Հերան որ իր մօր կողմէ մեծ յուզումով շնորհաւորեց ներկայ մայրերը: Յանկարծ իրարանցում մը: Ալեք Մանուկեանի վարի դասարաններուն աշակերտներն են: Հակառակ որ ուսուցչուիին իրենց կարգն ու կարգապահութիւնը կը ջանար պահել, այդ պատիկները վրդովման մէջ էին, ուրախ, որովհետեւ բեն պիտի ելլէին: Վերջապէս անոնք խումբ խումբ բեն ելան եւ մայրերու նուիրեալ երգերով մայրիկները ուրախացուցին: Տիկին Հերա, իբր գնահատանք այդ պատիկներուն նուէրներ բաժնեց:

Օրուան բանախօսը՝ Քրիստինէ Տրդատեան Գոյումճեան, գաղութիս յայտնի տեղեկագրողը, յատկապէս հրաւիրուած էր Ո.Տ.Յ.ի կողմէ:

Հանդիսավար Մելքոնեան բանախօսը ներկայացնելէ առաջ կարգաց Միութեանս նուիրուած քարտուղար՝ Ռահէլ Ուրֆալեանի մայրերու ուղղուած կոչ մը. «Մօր սիրտը անդունդ մըն է, որուն խորը



Տիկ. Էլտա Արքիպրիթեան Ալեք Մանուկեան վարժարանի աշակերտներուն հետ



Զախէն աջ՝ տիկնր. Արսինէ Աղդարեան եւ Քրիստինէ Գոյումճեան

կանը, քացատրեց թէ ինչո՞ւ զանազան ազգեր տարբեր թուականներու կը տօնեն: Այժմ Հայաստանի մէջ, օրինակի համար, ըստ ան, Ապրիլ 7-ին կը տօնեն: Յարգելի բանախօսը տուաւ հերոս ֆետայի կիներու անուններ, որոնք պատմութեան մէջ Մայրիկ անունին արժանացած են: Պիտի անդրադառնանք Քրիստինէին շահեկան բանախօսութեան մասին:

Տիկին Արսինէ Աղդարեան եւս հրաւիրուեցաւ բեն արտասանելու իր նախասիրած Համաստեղի (1895-1965) Մայր իմ Անոյշ ամենալուզիչ քերթուածը: Իսկական գոհար մըն է այս կտորը, պարզութեան մէջ վեհ պատկերներ, ինչ որ հիանալիօրէն տուաւ Արսինէն: Ներկաները շատ խանդավառուած եւ մանաւանդ հետաքրքրուած կ'երեւէին թէ՛ բանախօսին թէ՛ ասմունքողին գրական վերլիչումներով: Փափաքելի է նման ձեռնարկներուն մէջ գոնէ փոքր, շատ փոքր բաժին տրամադրել հայ գրական մշակոյթին:

Արա Մուքիասեան մայրիկներուն փոքրիկ զարդարուն նուէրներ դրկած էր: Շնորհակալ ենք: Եղան նաեւ սեղանի խաղեր: Մոնթրէլ-լահայ սիրուած եւ տաղանդաւոր երգիչ Արթիւր Արգարեան, ընկերակցութեամբ Յակոբ Մելքոնեանի երգեհոնի վրայ, հայերէն ժողովրդական սիրուած երգերով, ներկաներուն շուրջպարերով խանդավառութիւնը հասցուց իր գագաթնակէտին:

Վարձքը կատար բոլորին:

միշտ ներում կայ» խորագրով: Կարճ, յուզիչ, անհատական ու ազգային պատկերներով անուշ գրութիւն մը: Ապրիլս Ռահէլ: Գալով օրուան բանախօսին՝ ան նախ տուաւ Մայրերու Օրուան պատմա-